

նի ըլլար, այսու ալ կարելիութիւն կը տրուաւ եր հաստատուն եղբակցութեան մը հասնելու, գծախտարար ոչինչ գիտնէր այս մասին: Եթէ իրօք իրենեոս հայ մասնաւորութեան մէջ առաջին անգամ Սեբեոսի ժող կը յիշուի (էջ 126), կանխագոյն լուծիւնը բնաւ ցուցում չէ թէ հայերը իրենեայ գրութեանց մասին յառաջագոյն ծանօթութիւն չունէին, Եզնկայ աղբերաց քննութիւնը ցուցուց ըստ բաւական թէ Մաշտոցի աշակերտին ծանօթ էին Արիստիդէս, Մեթոսիոս, Հիպոդիոս եւ այլն: Եթէ իրօք իւր Գիրքն անուանած է Եզնիկ՝ Ընդդէմ Աղանդոց, կրնայինք կարծել այսու թէ իրենեոս իրեւ օրինակ ծառայած ըլլայ իրեն: Թէ Եզնիկ՝ Ընդդէմ Աղանդոց, գիրք մը կը յօրինէ, այս պարագան ի հարկէ կարծել կու տայ թէ, իւր ժամանակին տակաւն թարգմանուած չէին հայերէնի՝ իրենեոսի գրքերը: այսու հանդերձ Եզնկայ գրքին մէջ իրենեան ազգուններ կարելի է յաճախագոյն մատնանշել:

Սահակ երրորդի ընծայուած վարդապետական թղթին մէջ (հրտւի. Տեր-Միքայէան, էջ Ե) իրենեոսէ յառաջ բերուած կրկին վկայու թիւները կը հաստատեն պարզապէս թէ նոյն տանն լինի հայրապետ մեծապէս կը յորգուէր Հայոց ժող, բայց ոչ թէ նոյն ժամանակ թարգմանուած էր հայերէնի: Սահակի յառաջ բերութիւնը այնպիսի է որ կարծել կու տայ թէ Հեղինակը իրենեայ ծանօթութիւնը կ'ենթադրէ արդէն Սահակ կը գրէ ծանօթորականներու դէմ, բայց ասոնց դէմ ընդդիմաբանելով կը ձգտի ըստ իրքեան հայ ժողովրդեան հաւատքը հաստատել եւ պաշտպանել, այնպէս որ այսու ենթադրուած ծանօթութիւնը կրնանք նոյն իսկ հայ անդադադն չբնականին մէջ ալ որոնել: Թէ իրենեոս այս ժամանակուն մէջ քրիստոսի անպակասութեան մասին ծագած խնդրոյ առթիւ հայերէնի թարգմանուած է, գրքին ներքին բովանդակութենէն կարելի չէ հաստատել: Ըստ որում լինի Մարտիրոսը բնաւ միաբնեայ չէ. իսկ եթէ շատ կանուխ արդէն՝ Եզնկայ ժամանակէն քիչ ետքը ձեռնարկուած է թարգմանութեան, այս պարագան դարձեալ բնաւ չի մերժեր թարգմանութեան յոյն բարձրէն ծագումը, մանաւանդ թէ մեծ ապացոյց մըն է, որովհետեւ ճիշդ այս ժամանակներու մէջ յոյն գրութիւններ հայերէնի վերածելու քանքն ու ճիշդ սովորականէն աւելի էր: —

Յետոյ կ'անցնի Գրոթ. Վեբեր գրութեան հայրախոսական տեսակետէ կարեւորութիւնը շնչեւելու, որ յատկապէս հայ մասնագրութեան հետ առնչութիւն չունի:

Հ. Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ



ԱՅԼԵՒԱՅԻՆ

1. Հայ Տպագրութեան 400ամեակը: — Երբ ասկէ երկու տարի յառաջ Ցաճահայոց Չորսհարիւրամեակին հանդէպ րոնած դիրքը կը պարտաւէր, միւս կողմէն վտանգ էինք թէ Ռուսահայոց ազգու եւ հոմաբան զործունէութեամբը պիտի ուղղուի սխալը եւ ասը պիտի ըլլայ համազգային՝ հաստատուած համազգային եւ պատուաւոր ծրագրի մը վնաս: Բայց մենք մեր անկախութեան մէջ խաբուած ենք եղեր: Որոնք մտքէն կրնար անցնիլ թէ Էջմիածնի Յանձնաժողովը՝ Թիֆլիզի եւ Պալոյ իրարու մերձեցման նպատակով տեղ, իւր տարօրինակ ընթացքով անհամաձայնութիւններ պիտի սերմանէ իր եւ Թիֆլիզի Յանձնաժողովին միջեւ. անհամաձայնութիւններ, որոնք պարզապէս Թիֆլիզի Յանձնաժողովին դէմ ըլլալէն քիչ մը անդին ալ կ'անցնին: Թիֆլիզի Յանձնաժողովը կ'առաջարկէ Երեւանը տունել Էջմիածնի: Իսկ Էջմիածնի Յանձնաժողովը կ'որոշէ Հոկտեմբերին. Թիֆլիզի Յանձնաժողովը կ'առաջարկէ Երեւանը անմահացընել «Գրական Ֆոնդ»ով մը, իսկ Էջմիածնի Յանձնաժողովը կ'որոշէ «Գրարական Ֆոնդ»ով, որ եւ պիտի յանձնուի Էջմիածնի վեհաժողովուրդի կողմէն: Կարծիքս իրաւաւորութեան:

Յաւալի է որ Մշակ, ոչ ոք թերթի մը կը ջատագովուի այսպիսի ծրագրի մը: Ազգային մը, որ համոզուած է թէ հայ բուսելու համար՝ չլուսաւորչական, մակդիրն ալ ունենալու հարկ չկայ, այս կէտին մէջ «Հորիզոն»ին պաշտպանածէն տարբեր գաղափար մը չի կրնար պաշտպանել: Էջմիածնի Յանձնաժողովին Երեւանը ոչ թէ ազգային, այլ գաւառաբանական տուն մըն է գաւառաբանական ծրագրով մը. եւ այսու Երեւանի մասնաւորութենէն նովին իսկ կը զգուշանաւ շատ-կամ շատ Բողոքական հասարակութիւնները: կը զգուշանաւ Միւրի-

թարեան երկու Միաբանութիւնները, որոնց ազգին մատուցած գրական ծառայութեանց համեմատութեամբ՝ միւս բոլոր ազգային հաստատութիւններուն մատուցածը՝ կամօրէն մի ի դուլէն է:

Մտադրութեան արժանի ուրիշ կէտ մըն ալ. Վրէժուները, որ Էլմիսանին հայ կրօնական ամենամեծ հասարակութեան կենդրոնն ըլլալով՝ «Դպրոցական ֆոնդ»-ին պէտքը ամենէն աւելի ենարարած է իւր կուրքին վրայ. սակայն՝ «Հայ բարեգործական ընդհանուր միութեան», հաստատած 40—50 դպրոցները բաւական չէին ցոյցնելու համար թէ Միութիւնը ըստ իւր նպատակին կարող է Էլմիսանի պէտքին գոհացում տալու, եթէ միայն Էլմիսանին իւր դիրքէն օգտուելով՝ նպաստէ Միութեան շրջանին: Պարեմ շատ աւելի նպատակայարմար չէր ըլլար, եթէ Էլմիսանի յարգելի Յաննաթողովը Դպրոցական ֆոնդին՝ տեղ թիֆլիսի Յաննաթողովին հետ՝ Գրական ֆոնդին գաղափարը ընդգրկէր, որուն պէտքը միւսէն շատ աւելի է: Վասն զի ցորՀաի որ այս պէտքը գոյութիւն ունի, հայ գրականութեան՝ յատկապէս միութեան չկայ:

Հ. Ս. ՄՅՅՏԻՆՅԱՆ

2. Թ. Սեթեանի յորեմները. — Երկրորդ հայ գաղութը մտադիր է մօտ աստիճան տանելու, բանաստեղծ-գառարարակ Թովհանէս Սեթեանի 40 ամեակը (1913, Յունուար 26 ի Գահիրէ):

Այժմէն հաճախով կ'ողջունենք այդ ձեռնարկը, որ մեր ազգային վաղեմի քնարերգակ ազնիւ բանաստեղծի տաղանդին քնահայտման ամենացայտուն ապացոյցը պիտի ըլլայ: Սեթեան մեր արեւմտեան գրականութեան մէջ իբր բանաստեղծ, Մ. Պէշեմաշեանէն եւ թ. Թերլզեանէն ետքը բաւական ինքուրոյն խոշոր տեղ մը կը գրաւէ, տալով մեզի համեստ քանակութեամբ, բայց խկապէս գեղարուեստական թերթուաններու ազնիւ նմուշներ, որոնց գորովախառն բայց միանգամայն կենսալիւ ոյժը չի՛ն արդիւնք յառաջ չէ բերած հայ գրագէտ եւ ընթերցող հասարակութեան վրայ: Կենդանիները՝ որ Սեթեանն ալ տար գրականութենէն շատ ազդուած է իր բանաստեղծութեանց մէջ, սակայն այս կէտը Սեթեանի ներկայ գրական փառքին վրայ զգալի նուաստացում մը չի կրնար համարուիլ, վասն զի ընդհանրապէս իրենցով գրեթէ ամէն հայ բանաստեղծի վրայ, ոմանց շատ ոմանց չի՛ն, կը

տարածուի թժոշ ներուի մեզի ըսել, այս գուռախ, տութիւնը (daltonisme).

Այս ուրեմն երբ այսօր մեր հայ փորձիկ գրականութեան 40 ամեակ անխոնջ գործունեայ մշակի մը գրական արդիւնքը՝ հրապարակաւ յարգանաց առարկայ կը դուրս, քաղաքացի եղ թէ այդ տօնը իւրաքանչիւր հայէ արժանաւոր կերպով պիտի տօնուի. այն բանաստեղծ-գաստարակ Սեթեանի տօնը, որ «մեր գրական աշխարհին մէջ գուրգուրայի դէմը մ'եղած է, իր շուրջ ստեղծելով միշտ յարգանքի անուշ միջոցորդ մը՝ որուն ինք եղած է յաճախ ինկարայր բուռն վարը, իսկ իբրեւ ուսուցիչ, աւելիս զարգացած սերունդներ ձգած է իր ետեւ, որոնց իր փափակ զգացմունքներէն միշտ բան մը տուած է, եւ՝ որ այսօր երախտագիտութեամբ կը կարկառին դէպի իր վաղուր եւ աշխարհական հոգին, որ կրնայէր է ժամանակին աւերներէն անաղարտ եւ կենսալի պայքարին կիցներէն գերիվեր մնալ» (Կոչ):

Հ. Թ. ՏԵՐ-ՄԱՐԿԱՐԵԱՆ

3. Յովհ. Ժ. Ասորոց կամ թողիկոսի առ հայս թուղթը. — Ինչներորդ գարնաստորա-հայրական եկեղեցիներու յարաբերութեան ուսումնասիրութեան համար մեծ նշանակութիւն ունին յատկապէս Յովհ. Բար-Շուշանի (Բար-Էբր. Chron. Eccl. I, 435—448) «Հայոց կաթողիկոս»-ին (ալմայի, լաւագլու) ուղղած թուղթը կամ աւելի ճիշդ՝ «Հայոց կաթողիկոս»-ի նամակին տուած պատասխանը (Sachau, 60, p. 1—23) եւ «Գեորգայ Հայոց վերադիտողի» (մատաւորապէս 1064—1072) առ այս գրած պատասխանական թուղթը (Գիրք թղթոց, էջ 335—357): Այս կրկին յիշատակարանները «Հայոց եկեղեցու Ասորոց եկեղեցիներին հետ ունեցած յարաբերութեան, ուսումնասիրութեան ընդայած անհրաժեշտ կարեւորութեանը համար յատուկ ու մանրակրկիտ վերլուծման ու քննութեան պէտք էին բնականաբար ենթարկուիլ Եւրոպական 8 էր-Միս ասեսանցի ձեռքով, որ իրօք այս պէտքին գոհացում տուաւ բառին ամենայատուկ խմատով:

8 էր-Միս ասեսանցի համաձայն (Հայ. եկեղ. յարաբ. էջ 241)՝ ինչպէս երեւում է, ասորոց պատրիարք Թովհանէս Ժ. Բար-Շուշանը 1064-ից ոչ շատ յետոյ Հայոց կաթողիկոսներէրէ մէկին (այդպիսիք շատ էին այն ժա-

մանկ), գուցէ Գեորգին (1064-ի եւ 1072-ի մէջ) մի թուղթ է գրել, ցանկութիւն յայտնելով միութիւն հաստատել հայերի եւ ասորիներ մէջ: Այդ թղթի պատասխանը նա ստացել է, ինչպէս երևում է նրա ասորերէն մեջ հասած պատասխանից Հայոց կաթողիկոսին, ուր նա վերջինս թղթից կտորներ էլ է մէջ բերում. "դուք հարցնում էք, խոսքերով սկսելով (3բ), Գեորգիանաբար նրա առաջին թուղթը եւ Հայոց կաթողիկոսի առաջին պատասխանը կորած են երևում":

F. Nau, որ Revue de l'Orient chrétien-ի մէջ դեռ նոր հրատարակեց Բերլինի ձեռագրին ասորի բնագիրը գաղղերէն թարգմանութեամբ (1912, Nr. 2, էջ 145—198), Տէր-Մինասեանցի կարծեաց հանդէպ — որուն վրայ զանրամանկորէն տեղեկութիւն չունի — կը ներկայացնէ առեւի պարզ կարծիք մը՝ նամակս ուղղուած համարելով Գրիգոր Բ. (1065—1105) կաթողիկոսին (էջ 146): Ինչպէս յայտնի է, Գրիգոր երկրորդն էր որ Յունաց եւ Հռոմայ եկեղեցւոյ հետ խզուած յարաբերութիւնները վերստին արարեցելու ու պնդելու այնչափ փոքր տարաւ. Յունաց մասին թէպէտ ի գերեւ ելաւ իւր ձեռնարկութիւնը, այսու հանդերձ Հռոմայ Գրիգոր Նոթմբորգէն ընդունեցաւ պաշտօնը (Tournebize, Hist. polit. et relig. de l'Arménie, էջ 163—164). միութեան ցանկացող այս յայտարարեալ շէր կրնար քննանարար անտարբեր հետեւիլ նաեւ Յակոբիկ եկեղեցւոյ հանդէպ. եւ ահա Բար-Շուշանի թուղթը, որ պատասխան մըն է (հմմտ. § 2 եւ 3), կու գայ հաստատելու թէ Գրիգոր Ասորիներու ալ փութացած է գիմել երկու եկեղեցիներու մէջ եղած տարբերութեանց. մասին բացատրութիւն խնդրելու համար: Nau կը կարծէ թէ Son (Գրիգորի) initiative n'a pas été couronnée de succès, car le ton de la réponse et surtout les critiques qui ont été ajoutées à la fin de la lettre, ne permettent pas de croire que Grégoire s'en est montré satisfait (անդ.): Մեր նորագրած բառերով կը հասկնուի անշուշտ բերլինեան ձեռագրին 13բ—23ա թղթերը գրուող մասը, որ սակայն, ինչպէս արդէն նկատած են Տէր-Մինասեանց (անդ. էջ 244 եւ յւջ.) եւ Nau (էջ 189, Ծանոթ. 4), Բար-Շուշանի նամակին հետ քննու կապ չունի, այլ յետոյ

կցուած է, բայց արդէն Գեորգ կաթողիկոսի "Յեռոն Յովհաննու ասորեաց հովուապետի եւ մեծապատիւ պատրիարքի" (Գրիգ. թղ. էջ 333) ուղղած թղթին բովանդակութիւնն ալ կը ցուցնէ թէ "երկու հակառակորդները միմեանց ոչ մի զիջում չեն տնում" (Տէր-Մինասեանց, էջ 251), որով բնականաբար չի պատկուիր յաջողութեամբ՝ Գրիգորի փորձը:

Տէր-Մինասեանցէ կիմանալք թէ Մկրտիչ ք. Ղազարեան "մտադիր է այդ ամբողջ թուղթը հրատարակել ասորերէն եւ (հայերէն?) թարգմանութեամբ" (անդ. էջ 241). կը ցանկանք որ Nauի հրատարակութիւնը նոր գրգռու ըլլայ ասորագէտ Հայուն մտադրած ուսումնասիրութեան արագ լոյս տեսնելուն:

Հ. Մ. ԶԱՌԻՆՅԱՆ



ՍԱՅԵՆԱԳԻՏԱԿԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑԱՆԿ

«ՀԱՆԴԵՍ ԱՄՍՈՐԵԱՆ» ԱՌՍՈՐԵԱՆԵՐԻՐԻ

25 ՏԱՐԻՆԵՐՈՒՆ

(1887—1911)

ՑԱՆԿ Ա.

Յօդուածագիրներն եւ իրենց յօդուածները:

(Շարադարձութեամբ Պրէլ.)

- ԱԵԲԵՐ ՍՄՄ. Արարատը Ս. Գրոց մէջ (Թրգմ. Պիլեզիկեան). Ժ 218, 225, 312, 264.
- Ս. Գրոց յարգն ու արժէքը հին Հայոց. քով. Ժա 129.
- Եղնկայ "Եղն կամ Ընդգէմ" աղանդոց, դարձոյն յօրինման ժամանակը ու վաւերականութիւնը. Ժ 22, 110, 201.
- Հայերէնագետ Մ. Շիրք. ԺԺ 241.
- Ուսուցչական Պ. Գեւորտի. Ի 353.
- Վճ. Շիրքի թարգմանութիւն Եղնկայ. Ժ 212.
- ԱՌԻՆՇ Յ. Շիրուան, Խիզան եւ Ցատիկ դաւաւները. Դ 177, 204.
- Պեկ տաղ եւ Մալութիւ. Գ 1, 40.
- Տիգրիտի արեւելեան շիրկին աղբերակները. Գ 233, 257.
- ՎՇԻՍԼՈՎԿԻ. Առասպել մ'առ. Հայոց եւ յԱփրիկէ (Թրգմ. Գալեմբեարեան). Դ 139.